«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Գևորգ Ավագյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Արմինե Մովսիսյանի, Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով Դավիթ Գրիգորի Սարգսյանի /այսուհետ՝ դիմումատու/ Գևորգ Ավագյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և համապատասխան կարգապահական տույժ հարուցելու մասին դիմումը, որի անունից հանդես է եկել փաստաբան՝ Գայանե Ղուլյանը /արտոնագիր 1726, լիազորագիր տրված 20.05.2024թ.-ին, վավեր է մինչև 20.05.2025թ./ պարզեց՝

Դիմումատուի կողմից ինչպես ՀՀ Արդարադատության նախարարությանը, այնպես էլ ՀՀ գլխավոր դատախազությանը ներկայացվել է հաղորդում: ՀՀ ԱՆ ուղարկված հաղորդումը ՀՀ ԱՆ վերահսկողության վարչության պետ՝ Ա.Սուչյանի 18.07.2024թ.-ի թիվ /28,1/28420-2024 գրությամբ ուղարկվել է «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ին և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի հիմքով, կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել է կարգապահական վարույթ:

Դավիթ Գրիգորի Սարգսյանը իր հաղորդմամբ նշել է, որ Արտյոմ Ալեկի Վարդանյանի թիվ ՍՆԴ/1771/04/19 սնանկության գործով սնանկության կառավարիչ՝ Գևորգ Ավագյանի կողմից հայտարարվել է աճուրդային վաճառք: Իսկ կառավարչի կողմից 18.04.2024թ.-ին նշանակված աճուրդի թիվ 12 լոտի համաձայն՝ /«Mercedes-Benz s450 4 matic» մակնիշի 2009 թվականի արտադրության ավտոմեքենա, 17OL014 հաշվառման համարանիշի SՄ թափքի տեսակ, սեդան, գույնը սև մետալիկ, նույնականացման համարը՝ WDD2211841A15506, շարժի հզորությունը 250/340 ձիաուժ, փոխանցման տուփը ավտոմատ, սեփականատեր Արտյոմ Վարդանյանը/ աճուրդում 1.725.900 ՀՀ դրամ մեկնարկային գնով հաղթող է ճանաչվել Դավիթ Գրիգորի Սարգսյանը:

Ըստ լսումների ընթացքում առկա տվյալների պարզվել է, որ աճուրդի արձանագրության մեջ նշված ժամկետների, աճուրդում հաղթողի կողմից ամբողջ գումարը վճարվել է և գույքի հանձնման ժամանակ պարզվել է, որ աճուրդում գնված տրանսպորտային միջոցը գտնվում է վթարված և շահագործման ոչ ենթակա վիճակում:

Այսինքն, ըստ դիմումատուի, սնանկության գործով կառավարիչ նշանակված՝ Գևորգ Ավագյանը ոչ պատշաճ է կատարել «Սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված իր լիազորությունները և ըստ դիմումատուի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ուղղված հաղորդման և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին ներկայացված դիմումի շրջանակներում պարզաբանման ենթակա է հետևյալ հարցը, թե՝

- Արտյոմ Ալեկի Վարդանյանին պատկանող ավտոմեքենայի գնահատումը ինչ պայմաններում է իրականացվել,
- Գույքը ինչ վիճակում է ներկայացվել գնահատման փորձագետներին և ինչպես է ապրանքագետ-փորձագետի կողմից գնահատվել 8.700.000 ՀՀ դրամ,
- Գույքն աճուրդային եղանակով իրացնելու միջոցով Արտյոմ Վարդանյանին պատկանող գույքը 1.725.900 ՀՀ դրամ գումարով վաճառվել է վերջինիս, սակայն գույքը

պատշաճ որակի, տեսքի, ըստ շահագործման նշանակության համար եղել է ոչ պիտանի վիճակում:

- Մոլորության մեջ գցելով Դավիթ Սարգսյանին՝ արդյունքում պատճառել է խոշոր չափերի գույքային վնաս:

Իր հաղորդմամբ Դ.Սարգսյանը նշել, է, որ սնանկության գործերով կառավարիչ Գևորգ Ավագյանի հետ ստեղծված իրավիճակը պարզելու նպատակով ավտոմեքենայի տեխնիկական սարքինության վերաբերյալ բանակցություններ են տեղի ունեցել: Խնդրել են սարքին վիճակում 8.700.000 ՀՀ դրամ գնահատված ավտոմեքենան փոխանցել աճուրդում հաղթող ճանաչված Դավիթ Սարգսյանին: Կառավարիչը հայտնել է դրա անհնարինության մասին, սակայն աճուրդի հայտարարությունում լոտը նկարագրված է եղել սարքին վիճակում, իսկ փաստացի՝ մեքենան գտնվել է վթարված և անսարք վիճակում, այսինքն ենթակա չի եղել օգտագործման ըստ շահագործմանն շանակության: Սնանկության կառավարչի կողմից փաստացի վիճակի վերաբերյալ ներկայացրած լուսանկարներից պարզ երևում է, որ ավտոմեքենան ուղղակի անմխիթար, թալանված վիճակում է, վերածված ջարդոնի:

Դիմումատուն նշել է նաև, որ սնանկության կառավարչին նախապահանջ-առաջարկ է ուղարկվել աճուրդով գնված աճուրդային հայտարարությունում լոտի նկարագրված ավտոմեքենան իրեն տրամադրելու վերաբերյալ, կամ նույն տեսակի, նույն տարեթվի արտադրության այլ ավտոմեքենա, քանի որ իր համար հենց այդ մոդելի ավտոմեքենայի նկարագրված վիճակում ավտոմեքենայի ձեռք բերելն է էական, այլ ոչ թե վճարված գումարի ետ վերադարձը:

Դիմումատուի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ուղարկված հաղորդագրությամբ, իրավապահ մարմնի առջև բարձրացվել է սնանկության կառավարչի կողմից նշված սնանկության գործով իրականացված /կամ չիրականացված/ գործողությունների գնահատումը՝ իրավական տեսանկյունից, այն է՝ հանձնարարել համապատասխան մարմիններին օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել, ստուգել և պարզել Գևորգ Ավագյանի կամ այլ անձի /անձանց/ արարքներում հանցակազմ առկա է, թե ոչ և եթե պարզվի որ նրանց արարքում առկա է քրեորեն պատժելի արարք, ապա իրավական գնահատական տալ և այն կատարող անձին /անձանց/ ենթարկել համապատասխան պատասխանատվության:

Ինչպես արդեն նշվել է սույն արձանագրության մեջ, ՀՀ Արդարադատության նախարարության վերահսկողության վարչության պետ՝ Ա.Սուչյանի 18.07.2024թ.-ի թիվ /28,1/28420-2024 գրությամբ, հաղորդումը ուղարկվել է «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա,, ԻԿԿ-ին և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի1-ին մասի 3-րդ ենթակետի հիմքով, կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել է կարգապահական վարույթ, իսկ «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ի, Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի հիմքով՝ կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյանի կողմից, 02.05.2024թ., 08.08.2024թ.-ին, 24.08.2024թ.-ի և 25.10.2024թ.-ին նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, այն է՝ 08.08.2024թ.-ին, Գևորգ Ավագյանի կողմից «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ին է ներկայացվել միջնորդություն, որով վերջինս հայտնել է, որ թիվ ՍՆԴ/1771/04/19 սնսանկության գործի շրջանակներում, 18.04.2024թ.-ին նշանակված աճուրդին, թիվ 12 լոտի, այն է՝ «Mercedes-Benz s450 4 matic» մակնիշի 2009 թվականի արտադրության, 17OL014 հաշվառման ավտոմեքենայի, 1.725.900 ՀՀ դրամ մեկնարկային գնով աճուրդում հաղթող է ճանաչվել Դավիթ Գրիգորի Սարգսյանը, որը սահմանված ժամկետներում վճարել է ավտոմեքենայի ողջ արժեքը:

Կառավարիչը հայտնել է, որ դատարանի 12.06.2024թ.-ի որոշմամբ, ավտոմեքենայի նկատմամբ կիրառված արգելանքները վերացվել են: Կառավարիչ Գ.Ավագյանը նշել է նաև, որ գնորդը, ինչպես մինչև աճուրդի անցկացման օրը, այնպես էլ հիմնական գումարը վճարելու ժամանակ, մեքենաի տեղադիտարկում չի անցկացրել և չի ծանոթացել լոտին և նման պայմաններում բնական է, որ կառավարիչը չեր կարող մոլորության մեջ գցել գնորդին: Նույն միջնորդությամբ, Գ.Ավագյանը հայտնել է, որ պարտապանը բացակայում է ՀՀ-ից և լրացուցիչ ապացույցների ներկայացման պատճառով, Գ.Ավագյանը խնդրել է հետաձգել հրավիրված նիստը: Իսկ հետագա հրավիրված նիստերի ընթացքում, նշանակված նիստերը հետաձգվել են ավտոմեքենայի վերանորոգման համար ժամկետներ սահմանելու, ինչպես նաև բողոք ներկայացված անձի և կառավարչի միջև փոխադարձ համաձայնություն ձեռք բերելու պատճառով:

Հարկ է նշել նաև, որ կարգապահական նիստը հետաձգվել է նաև այն պատճառով, որ 2024թ.-ի նոյեմբերի 9-ին կայացած՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի ընդհանուր ժողովից հետո ձևաորվել է նոր կարգապահական հանձնաժողով և նշված գործով նիստը նշանակվել է 21.01.2025թ.-ին, որում արդեն իսկ քննարվել է դիմումատուի ներկայացուցիչ՝ Գայանե Ղուլյանի դիմումը, ուղղված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին, որով վերջինս հայտնել է, որ Դավիթ Սարգսյանի և սնանկության կառավարչի միջև վեճը ավարտված է և կողմերը հաշտվել են, Դավիթ Սարգսյանը պարտք-պահանջ չունի Գևորգ Ավագյանի հանդեպ, հետևաբար վեճն ըստ էության սպառվել է, վեճի ըստ էության սպառված լինելը հանդիսանում է տվյալ վարույթի կարճման համար հիմք և խնդրել է սնանկության գործերով կառավարիչ՝ Գևորգ Ավագյանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը կարճել:

Նշված ժողովին ներկայացել էին կարգապահական հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը և Հարություն Գևորգյանը, և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նիստի անցկացման համար քվորումն ապահովված էր, ուստի նշված նիստը համարվեց բացված, չնայած այն հանգամանքին, որ ինչպես դիմումատուն, այնպես էլ Գ.Ավագյանը պատշաճ ծանուցված են եղել նիստի անցկացման տեղի և ժամի մասին:

Ժողովը բացեց կարգապահական հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանը, որը մասնակիցներին ընթերցեց ներկայացված վերը նշված դիմումը և խնդրեց հայտնել իրենց կարծիքը ներկայացված դիմումի վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը հայտնեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ինչպես դիմումատուն, այնպես էլ՝ սնանկության գործով կառավարիչը հաշտվել են, ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճել:

Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Սարգսյանը հայտնեց, որ եթե բողոք բարձրացնող անձը այս պահի դրությամբ գտնում է, որ չկա վեճ և վարքագծի կանոնի խախտում, ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճելու վերաբերյալ

Հանձնաժողովի անդամ, նախագահ Արման Սարգսյանը հայտնեց, որ չնայած նրան, որ իրականում կարող էին դիմումատուի կողմից դիմումում ներկայացրած հանգամանքները իրոք հանդիսանալ կառավարչի կողմից վարքագծի կանոնի խախտում, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումից ըստ էության դիմումատուն հրաժարվել է՝ հայտնել է, որ վեճը սպառվել է և խնդրել է վարույթը կարճել, իսկ նման պայմաններում կարգապահական հանձնաժողովը չունի ըստ էության դիմում, ուստի նույնպես հայտնեց կարծիք, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետը նախատեսում է, որ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին

որոշում կայացնելը, կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները:

Եթե դիտարկեն վերը նշված նորմի փաստական հանգամանքները, ապա ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ սույն հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ ըստ էության, կառավարչի կողմից լուծվել է դիմումում նշված վեճը և դիմումատուի կողմից այլևս որևիցե մի պահանջ առկա չէ:

Կից ներկայացվում է կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը՝ 30 թերթից, ինչպես նաև նիստի ձայնագրության կրիչը:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան

Ա.Մովսիսյան